



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«29» 01 2018թ.

No 06/3-4/4152-18

Ձեր No _____

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ
ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ
ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԿ-Ի ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ

ՊԱՏՃԵՆԸ՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ ՓՈՔՐ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ
ՀԱՐԿԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ-ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ ՊԱՐՈՆ Ռ. ՄԱՇԱԴՅԱՆԻՆ

ՀՀ ԿԱ ՊԵԿ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ ՊԱՐՈՆ Վ. ՍԻՍԱԿՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 11.01.2018թ.

թիվ E162-8D01-5861 գրության

Հարգելի պարոն Համբարձումյան

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝
Օրենսգրք) 307-րդ հոդվածի 3-րդ մասով, հայտնում ենք հետևյալը:

Օրենսգրքի 394-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դրոշմավորման ենթակա
ապրանքներ արտադրող կամ Օրենսգրքի 391-րդ հոդվածի 6-րդ մասում նշված հարկ
վճարողները ապրանքների դրոշմավորումը կարող են իրականացնել ապրանքի
արտադրության կամ օտարման նախապատրաստման ցանկացած փուլում՝ իրենց կողմից
ընտրված տարածքում, բայց ոչ ուշ, քան մինչև այդ ապրանքների օտարումը:

Հաշվի առնելով վերոնշյալ իրավակարգավորումը՝ հայտնում ենք, որ տնտեսավարող
սուբյեկտը ի պահ տրված ապրանքները կարող է դրոշմապիտակներով դրոշմավորել

պահատվության պայմանագրում նշված հասցեում՝ գնորդի տարածքում, մինչև դրանց օտարումը:

Հարգանքով՝



Վ. ՄԻՐՈՒՄՅԱՆ

Կապարող՝ ՎՄՍԸՎ ընթացակարգերի բաժին,
Գայանե Ջալինյան, հեռ. 060-544-648